Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. ապրիլի 17-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«17» 04 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

1. **Ընդհանուր դրույթներ**.

1. Սույն կանոնակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) ռեկտորատի կարգավիճակը, աշխատանքների կազմակերպման, նիստերի գումարման ու անցկացման կարգը:
2. ԳՊՀ ռեկտորատի կանոնակարգը հաստատվում է ԳՊՀ գիտական խորհրդի կողմից և ուժի մեջ մտնում հաստատման պահից:
3. ԳՊՀ ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը Համալսարանի հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով իրեն ընձեռված լիազորությունների սահմաններում քննարկում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցեր, հոգաբարձուների խորհրդի խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը:

2. **ԳՊՀ ռեկտորատի կազմը**.

4. ԳՊՀ ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականը (առկայության դեպքում), ակադեմիական քաղաքականության բաժնի պետը, գլխավոր հաշվապահը, արհեստագործակցական միության նախագահը, ֆակուլտետների դեկանները:
5. ԳՊՀ ռեկտորի հրավերով ռեկտորատի նիստերին կարող են մշտապես կամ ժամանակավորապես մասնակցել Համալսարանի այլ աշխատակիցներ, մասնագետներ:

6. **ԳՊՀ ռեկտորատի աշխատակարգը**.

6. ԳՊՀ ռեկտորատի նիստերի գումարումը, օրակարգի սահմանումը և նախագահումը ԳՊՀ ռեկտորի լիազորությունն է:
7. ԳՊՀ ռեկտորատի նիստերը գումարվում են որպես կանոն շաբաթը մեկ անգամ: Ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր:
8. ԳՊՀ ռեկտորը, բացելով ռեկտորատի նիստը, հայտարարում է օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը:

9. **ԳՊՀ ռեկտորատի որոշումները**.

9. Քննարկվող հարցերով ԳՊՀ ռեկտորատն ընդունում է որոշումներ, որոնք ունեն խորհրդատվական բնույթ և կենսագործվում են ռեկտորի հրամաններով:

10. **ԳՊՀ ռեկտորատի նիստերի արձանագրությունը**.

10. ԳՊՀ ռեկտորատի նիստերն արձանագրվում են: Արձանագրության վարումը կազմակերպում է նիստերի քարտուղարը:
11. ԳՊՀ ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, ներկա անձինք, օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:
12. ԳՊՀ ռեկտորատի արձանագրությունները ստորագրում են ԳՊՀ ռեկտորը և նիստերի քարտուղարը: